

հորը, Պիր Եագուպ: Ասիկա նշանաւոր եղած է մասնաւորապէս մեր Փրկչին հոն կենալով՝ Սամարացի կընոջ հետ խօսելուն և Սամարացիներուն քարոզելուն համար (Յովհ. Դ. 5-42): Այս պատճառաւ կը կոչուի Սամարացի կեոջ քրիորը (Պիր Սամարիէհ):

Տեղւոյն առաջին քրիստոնեաները բարեպաշտական զգացումը ունեցան այս տեղը պահպանելու իբր թանկագին յիշատակ մը Աւետարանի Սամարացի կընոջ: Այն իրողութեամբ որ Քրիստոս այս ջրհորին հորպսակին վրայ նստած էր, նոյն վայրկեանին անկէջուր խմել ուզելու առթիւ: Զուրը՝ խօսակցութեան խորհրդանշանական նիւթը, ընդունած է տեսակ մը նուիրականութիւն մկրտութեան նշանակութեամբ: Աւագանի մը երեւոյթին տակ կը յիշուի պատմութեան մէջ Յակոբի ջրհորին վրայ կառուցուած այս առաջին յիշատակարանը:

Պորտոյի ուխտաւորը երեք անգամ կը յիշատակէ զայն, բայց մկրտարանի իմաստով: Նապլուսի եպիսկոպոսը նոյն տեղւոյն վրայ Փրկչին ներկայութեան ի յիշատակ հոն կուգար հանդիսաւորապէս մկրտութիւն կատարելու համար:

Զրհորին վրայ շինուած է առաջին եկեղեցին Դ. դարուն. հաւանաբար շինած է Գերմանոս եպիսկոպոսը որ 325 ին Նիկիոյ ժողովին ներկայ եղած և տեսակցած է Կոստանդիանոսի և Երուսաղէմի Մակար հայրապետին հետ:

529 ին Յուստինիանոսի օրով ծագած Սամարացիներու ապստամբութեան ժամանակ եկեղեցին այրած է ուրիշ հինգ եկեղեցիներու հետ զոր կը յիշատակէ Պրոկոպիոս Կեսարացին:

532-37 կը շինուէր Կ. Պոլսոյ Ս. Սոփիա եկեղե-